

Գ
ԱՆԵԾՔՆԵՐ, ՕՐՀՆԱՆՔՆԵՐ, ԵՐԴՈՒՄՆԵՐ

Ա Ն Ե Ծ Ք Ն Ե Ր

- | | |
|---|--|
| 1 (886).
Ազուտնճիտ թըղ բադոա, թըղ սաղրնուս: | 1 (886).
Ականջդ թող պատուվի, խլանաու: |
| 2 (887).
Ազուաքիս պիրճնիտ թըղ ֆիթա: | 2 (887).
Ատամներդ բերանումդ թող թափվեն: |
| 3 (888).
Ախրուս թըղ տտոնուս: | 3 (888).
Թող համրանաս: |
| 4 (889).
Անութա թըղ սաղդէս: | 4 (889).
Քաղցած թող սստկես: |
| 5 (890).
Ասդուձ դձիովէլն թըղ գդրդի: | 5 (890).
Աստված ձեռքերդ թող կտրուի: |
| 6 (891).
Ասդուձ թըղ անցընի վքէ: | 6 (891).
Աստված թող քեզ շնչի: |
| 7 (892).
Ասդուձ էրգան ծմըր թըղ ուղօ քէ, յանրչան
րանքին անէ թըղ չըխանխսէս: | 7 (892).
Աստված թող երկար կյանք սա քեզ, շարչա-
րանքից շսուստվես: |
| 8 (893).
Ասդուձ հիչ թըղ չըխընդսցընը գքիզ: | 8 (893).
Աստված քեզ երրեք թող շուրախացնի: |
| 9 (894).
Ասդուձ սարրիտ թըղ թըմմը: | 9 (894).
Աստված համբրությունդ թող սպառի: |
| 10 (895).
Ասիլաքիտ թըղ անվտ: | 10 (895).
Վերջին խոսքդ (դամբանական) թող ասվի: |
| 11 (896).
Գիշէլտ թըղ աղվու մունդր օուղու: | 11 (896).
Կաշիդ մանր աղով թող աղվի: |
| 12 (897).
Գիրուձիտ հանրում թըղ ըննօ: | 12 (897).
Կերածդ հարամ թող լինի: |
| 13 (898).
Գիրուձիտ ծիովալա, վիզվէլտ թըղ պոնը: | 13 (898).
Կերածդ ձեռք ու ոտքդ թող ըննի: |
| 14 (899).
Էմ տմազը հանրում թըղ ըննօ քէ: | 14 (899).
Իմ երախտիքը թող հարամ լինի քեզ: |
| 15 (900).
Ըրգը իչվէա թըղ ֆիթա, թըղ գուրնուս: | 15 (900).
Երկու աչքդ թող թափվի, թող կուրանաս: |
| 16 (901).
Ըոուխիտ ծնգիտ ի վտր թըղ չիշնա: | 16 (901).
Հադուսադ ծնկիցդ ներքև թող չիշնի: |
| 17 (902).
Թըղ բաթմըշ ըննուս: | 17 (902).
Թող խորտակվես: |
| 18 (903).
Թըղ գանրգմվէս: | 18 (903).
Թող կարկամվես: |
| 19 (904).
Թըղ գուրնուս: | 19 (904).
Թող կուրանաս: |
| 20 (905).
Թըղ չըբանշարիտ անրէր: | 20 (905).
Թող չկարողանաս ապրել: |

21 (906).
 Թըղ չըրնշարիս ըննուս:
 22 (907).
 Թըղ չըրիշղանուս:
 23 (908).
 Թըղ չըթուրամը ըննուս:
 24 (909).
 Թըղ չըխնդուս, իլօհիմ:
 25 (910).
 Թըղ չըտառնուս:
 26 (911).
 Թըղ չըմիգնուս, լճ մ գարէլք թըղ չըհասնէլու:
 27 (912).
 Թըղ չուլաղնուս:
 28 (913).
 Թըղ սաղընուս:
 29 (914).
 Թըղ քութրուսնուս, վիգվէլտ թըղ գդրդա:
 30 (915).
 Թըղ քըվըրթուս տըղ գըրգիգ արէլու:
 31 (916).
 Լ՛ջցիտ լուալս թըղ ֆիթա:
 32 (917).
 Լիդօտ թըղ չիրնը:
 33 (918).
 Խալնանէտ հիկկէն թըղ քըրքըրվա:
 34 (919).
 Միռվալտ թըղ գդրա, մադանքիտ փշըվէլն:
 35 (920).
 Կրղմանէլտ մէլչ թըղ զըբըրդուս:
 36 (921).
 Կիշիբու թըղ բառգալս, սնբախդան թըղ չիմնուս:
 37 (922).
 Համպալս թըղ իփիսդէ:
 38 (923).
 Հիկկէլտ թըղ ըննէ:
 39 (924).
 Հիկկէլտ գրէլգ թըղ վառվա:
 40 (925).
 Հիկկէլտ մարմանքիտ թըղ գարվա:
 41 (926).
 Հիկկէլտ քըֆըլ-քըֆըլ թըղ ըննը:
 42 (927).
 «Հոց, հոց» անիլով հիկկէտ թըղ ըննը:
 43 (928).
 Հուցը լալան, տօն ծիալոր:
 Ուրթո՛ւս, ուրթո՛ւս չըհասնէս գէ:
 44 (929).
 Հննդիտ թըղ չիրնը:
 45 (930).
 Հօուց, զարալը աիրուր թըղ չըղըննուս:

21 (906).
 Թող ապրիլու շնորհք շունենաս:
 22 (907).
 Թող չկշանաս:
 23 (908).
 Թող չմեծանաս:
 24 (909).
 Տտ աստված, թող շուրախանաս:
 25 (910).
 Թող չվերադառնաս:
 26 (911).
 Թող չմեծանաս, իմ տարիքին թող չհասնես:
 27 (912).
 Թող կոնատվես:
 28 (913).
 Թող խլանաս:
 29 (914).
 Թող անդամալուծ լինես, ոտքերդ կտրտվեն:
 30 (915).
 Կորկոռապուրի պէս թող եռաս:
 31 (916).
 Աչքիդ լուսը թող թափվի:
 32 (917).
 Լեղուդ թող շորանա:
 33 (918).
 Սկեսրոշդ հոգին թող քրքրվի:
 34 (919).
 Ձեռքդ թող կտրվի, մատներդ թող փշըվեն:
 35 (920).
 Գերեղմանիդ մեջ թող եռաս:
 36 (921).
 Գիշերը թող քնես, առավոտը թող չղարթնես:
 37 (922).
 Մեռելաճաջ եփես այն:
 38 (923).
 Հոգիդ թող դուրս դա:
 39 (924).
 Հոգիդ կրակի մեջ թող վառվի:
 40 (925).
 Հոգիդ մարմնիդ թող կապվի:
 41 (926).
 Հոգիդ կաթիլ-կաթիլ թող դուրս դա:
 42 (927).
 «Հա՛ց, հա՛ց» ասելով հոգիդ թող ելնի:
 43 (928).
 Հացը ոռավոր, դու ծիալոր:
 Գնա՛ս, դնա՛ս չհասնես նրան:
 44 (929).
 Սերմը թող շորանա:
 45 (930).
 Հացն ու ապուրն իբար հետ թող չզանես:

46 (931).
 Զանգի թող խախտալս:
 47 (932).
 Ղարբուհի թող քրտրթո:
 48 (933).
 Մահրում թող մընաս:
 49 (934).
 Մըրտգէտ թող չըհաննէս:
 50 (935).
 Յադ բոյն թող ուրթուս:
 51 (936).
 Յաննը ղարան թող պըռնի գըի:
 52 (937).
 Յէլիըր դանին ըըր ըննիս, ուփ մը մախէլը
 բըր քարիմ լիդըդալս:
 53 (938).
 Յոթը ղաթ կիդէլն թող մընէս:
 54 (939).
 Զըտառնիը շամփէլը թող ուրթուս:
 55 (940).
 Պայսիտ տուր վիր թող չըննը:
 56 (941).
 Զըհաննամէն դուզը ուրթուս, լիտ չուկուս:
 57 (942).
 Զըհաննամը պիժեն թող ըննուս:
 58 (943).
 Զըհաննուամ թող ուրթուս:
 59 (944).
 Զիդյարէտ բտդոնէն թող ֆիթա:
 60 (945).
 Սարաբ ըննուդէն դժնը թող փըլլս:
 61 (946).
 Սարաբ ըննուդէն չիդօր քարար թող ըննը:
 62 (947).
 Սադանը պիժէլն տառնուս:
 63 (948).
 Սիվ խարուրիտ թող ուկօ:
 64 (949).
 Սմէլմ թող ըննը քիգ:
 65 (950).
 Սծնըը կլաուխիտ թող ձիձվա:
 66 (951).
 Տըգ միդժ թող ասնալս:
 67 (952).
 Ուր-արիվ թող չըդիսնօս:
 68 (953).
 Փէրիտ հացու թող չըլվա:
 69 (954).
 Փուրիտ թող դիսնօս, կէրդիտ՝ չըդիսնօս:
 70 (955).
 Քան գալուա աղվիր ծուրիտ աս թող ըննը:
 71 (956).
 Քսուն դարէ թող չըտառնուս:

46 (931).
 Մարավ թող խեղդվես:
 47 (932).
 Գերեղմանգ թող եոս:
 48 (933).
 Զրկված թող մնաս:
 49 (934).
 Մուրագիդ թող չհասնես:
 50 (935).
 Այդ հասակիդ թող մեռնես:
 51 (936).
 Անբուժելի հիվանդությունը թող քեղ բռնի:
 52 (937).
 Երբ տանից դուրս գաս, մի բուռ մոխիր պիտի
 ցանես ետեիցդ:
 53 (938).
 Յոթ աակ գեսիներ թող մտնես:
 54 (939).
 Անգարձ ճանապարհով թող գնաս:
 55 (940).
 Բուլսդ թող չաճի:
 56 (941).
 Դժոխքի հատակը գնաս, ոտ չգաս:
 57 (942).
 Դժոխքի բաժին թող լինես:
 58 (943).
 Դժոխք թող դնաս:
 59 (944).
 Զիդյարիգ պատառները թող թափվեն:
 60 (945).
 Պաաճառ եղողի տունը թող փլվի:
 61 (946).
 Պատճառ եղողի սիրտը թող խորովվի:
 62 (947).
 Սատանի բաժին դառնաս:
 63 (948).
 Սե չուրդ թող գա:
 64 (949).
 Թույն թող դառնա քեղ:
 65 (950).
 Սանըը դիխիգ թող խփվի:
 66 (951).
 Մեղվի պես թող ոչնչանաս:
 67 (952).
 Օր-արև թող չաեսնես:
 68 (953).
 Փորդ հացով թող չլցվի:
 69 (954).
 Փորումդ թող տեսնես, գրկումդ՝ չաեսնես:
 70 (955).
 Քո ամենալավ օրդ այս թող լինի:
 71 (956).
 Քսան աարեկան թող չդառնաս:

Օ Ր Է Ն Ա Ն Ք Ն Ե Ր

- 72 (957).
Աղվանի վահանա թըղ անցընիս:
73 (958).
Աղվանի ուրիթ թըղ դիսնուս:
74 (959).
Անծռ ուղիք զը:
75 (960).
Ասղըձուց զըխնտրիմ, զըսմաթիս բուլ
թըղ ուղո:
76 (961).
Ասղուձ աղվանի նշանձո մը թըղ ուղո քէ:
77 (962).
Ասղուձ բիհէ զքէ:
78 (963).
Ասղուձ բիհէ զնիշանձուս:
79 (964).
Ասղուձ բիհէ քէ լավրաքը:
80 (965).
Ասղուձ զպարէն թըղ զպարը:
81 (966).
Ասղուձ ըմմընէն զսմաթը թըղ ուղո, զէմ
չօճըխնէն անէ:
82 (967).
Ասղուձ թըղ էշէ քէ լիբիսը:
83 (968).
Ասղուձ թըղ խալիսի զքէ լաղ ըսլին:
84 (969).
Ասղուձ իրզան ճմըր թըղ ուղո քէ:
85 (970).
Ասղուձ խիլք ու շնուրք թըղ ուղո քէ:
86 (971).
Ասղուձ զպարթի թըղ ինէ:
87 (972).
Ասղուձ լարդըմշա ընի քէ:
88 (973).
Ասղուձ սըրդէս գծրա թըղ ուղո:
89 (974).
Ասղուձ վըդից-ծառուց թըղ շիսկէ:
90 (975).
Ասղուձ ուղուրմա քու զանդէն, քու մուրը հուկէն:
91 (976).
Արիվ ըննօ քէ շուճըխնուս:
92 (977).
Գալթիս հալուլ թըղ ընը քիզ:
93 (978).
Գիխուձ դիդիս վուրթ թըղ պուսնու:
74 (979).
Թըղ ձիս, ձանդիս:
- 72 (957).
Լավ ժամանակ թող անցկացնես:
73 (958).
Լավ օրեր թող տեսնես:
74 (959).
Անուշ ուտեք:
75 (960).
Աստծուց խնդրեմ, բաժինդ առատ թող տու:
76 (961).
Աստված մի լավ նշանած թող տա քեզ:
77 (962).
Աստված պահի քեզ:
78 (963).
Աստված պահի սշանածդ:
79 (964).
Աստված պահի քո զավակները:
80 (965).
Աստված բարին թող կատարի:
81 (966).
Աստված բոլորի բաժինը թող տա նոս իմ զս-
վակներին:
82 (967).
Աստված երեսդ թող նալի:
83 (968).
Աստված թող քեզ սղտտի այդ փորձանքից:
84 (969).
Աստված քեզ երկար կյանք թող տա:
85 (970).
Աստված խելք ու շնորհք թող առ քեզ:
86 (971).
Աստված ընդունիլի թող անի:
87 (972).
Աստված օգնական լինի քեզ:
88 (973).
Աստված սրտիդ համեմատ թող տա:
89 (974).
Աստված ոտքից-ձեռքից թող շնի:
90 (975).
Աստված ողորմի քու հոր ու մոր հողուն:
91 (976).
Արեը լինի քո զավակներին:
92 (977).
Կաթս հալուլ թող լինի քեզ:
93 (978).
Կոխած աեղղ վարդ թող բուսնի:
94 (979).
Թող ձիս, ծաղկես:

- 95 (980).
 Լիտի ուրիտ պանրա թըղ ըննո:
 96 (981).
 Իրգան տմըր քիղ:
 97 (982).
 Խիւք ու շնորք թըղ ունուուս, թըղ դահ-
 նուս, բանոգ դառնուս:
 98 (983).
 Խիւք ու շնորք ունուուս, դմինձիրը
 լսող ըննուս:
 99 (984).
 Խուղ թըղ պոնիս, իսկա թըղ սառնո:
 100 (985).
 Ծառուցիտ-վըդուցիտ թըղ չիյնէս:
 101 (986).
 Ծիթինէն նանդուր դիրիվ գօ, քանդան դա-
 րա թըղ անրէս:
 102 (987).
 Ծիր դանրբնէն անէ թըղ ուկուն իշալլու:
 103 (988).
 Հայր Ապրահամո բանաքանթր միչը թըղ ըննո:
 104 (989).
 Հիկկէլտ արքանութէն:
 105 (990).
 Հիկկէլտ սաղ թըղ ըննը:
 106 (991).
 Հիկկէլտ քիղ դուրբուն:
 107 (992).
 Շըննիւն գանդունու:
 108 (993).
 Շըննիւն գանդանիս:
 109 (994).
 Շննիւն թըղ ըննո:
 110 (995).
 Չծր թըղ պոնիս, գանաչ թըղ տառնո:
 111 (996).
 Պանրը էվլուր թըղ ըննը:
 112 (997).
 Պանրով վիլլիս:
 113 (998).
 Զամփոյիտ լալս թըղ ձիթէ:
 114 (999).
 Զաննաթ ուրթուս:
 115 (1000).
 Սունդիտ պարա թըղ ըննը:
 116 (1001).
 Ասդըղիտ թըղ ըննը:
 117 (1002).
 Սիրագոնիտ սաղ թըղ գինո:
 118 (1003).
 Վըղիտ քուրը թըղ չըքիշըղվտ:
- 95 (980).
 Հեաին օրդ թող բարի լինի:
 96 (981).
 Քեղ երկար կյանք:
 97 (982).
 Խեւք ու շնորք թող ունենաս, թող ծերանաս,
 պապիկ դառնաս:
 98 (983).
 Խեւք ու շնորք ունենաս, մեծերին լսող
 լինես:
 99 (984).
 Հող թող բունես, ոսկի թող դառնա:
 100 (985).
 Ձեռքիցդ-տաքիցդ թող չընկնես:
 101 (986).
 Ձիթենու վրա ինչքան աերե կա, այդքան աարի
 թող ապրես:
 102 (987).
 Երանի ձեր պանդուխաներն էլ վերադառնան:
 103 (988).
 Հայր Աբրահամի բարաքյաթը մեջը թող լինի:
 104 (989).
 Հողիդ արջալուծուն դնա:
 105 (990).
 Հողիդ ողջ թող լինի:
 106 (991).
 Հողիս քեղ դուրբան:
 107 (992).
 Շնորհավոր կաղանդ:
 108 (993).
 Շնորհավոր դաաիկ:
 109 (994).
 Շնորհավոր թող լինի:
 110 (995).
 Չոր թող բունես, կանաչ թող դառնա:
 111 (996).
 Բարի դավակ թող լինի:
 112 (997).
 Բարով վայելես:
 113 (998).
 Ըանապարհիդ թող լույս ծաթի:
 114 (999).
 Դրախա դնաս:
 115 (1000).
 Վերջդ բարի թող լինի:
 116 (1001).
 Ողջութունդ թող լինի:
 117 (1002).
 Սիրեցյալդ ողջ թող մնա:
 118 (1003).
 Ուրդ քարի թող չդիպչի:

119 (1004).

Ուաշքիդ լալս:
120 (1005).

Ումըլը քիդ, քը լավրույց:
121 (1006).

Ման դկիւէս մուլը ասղամ խիւք աս
շննրք թրդ ասք քէ:
122 (1007).

Կիլում զիդիս դանանչ թըղ պասնո:
123 (1008).

Օմըրիտ էրգան թըղ ըննո:

119 (1004).

Աչքը լալս:
120 (1005).

Կյանքը քեղ ու քո ղաւակներին:
121 (1006).

Գլխիդ մաղերի շափ աստված խելք ու
շնորհք տա քեղ:
122 (1007).

Քայլած ակզդ կանաչ թող բուսնի:
123 (1008).

Կյանքդ երկար թող լինի:

Ե Ր Գ Ո Ի Մ Ն Ե Ր

124 (1009).

Ասղո՛ձ շահաս:
125 (1010).

Ալամը թըղ թուքնո լիրիսիս:
126 (1011).

Գղրջութօնիս խալլի թըղ չըդսնոմ:
127 (1012).

Թըղ դուսնոմ:
128 (1013).

Թըղ մուրաղէս չըհանէլմ:
129 (1014).

Իրվաս անրիվ թըղ չըձիթի:
130 (1015).

Իրվաս թըղ չըլուսնո:
131 (1016).

Ձուչըխնէս խէրը թըղ չըդիսնոմ:
132 (1017).

Վալլահ ըիլլահ:
133 (1018).

Ուղ-հնչ թըղ ըննո լարասինէս:
134 (1019).

Քրըսդնո:

124 (1009).

Աստված վկա:
125 (1010).

Աջխարհը թող թքի երեսիս:
126 (1011).

Կարիճությունս թող շահանեմ:
127 (1012).

Թող կուրանամ:
128 (1013).

Թող մուրաղիս չհասնեմ:
129 (1014).

Վրաս արև թող չծաթի:
130 (1015).

Թող չլուսացնեմ:
131 (1016).

Ձավակներիս լավը թող շտեսնեմ:
132 (1017).

Աստված վկա:
133 (1018).

Աղ ու հաց թող լինի մեր միջի:
134 (1019).

Քրիստոս վկա:

